

Աշխարհի խորհրդարաններում կանայք՝ 23,4%



Միջխորհրդարանական միության վերջին տվյալներով կանանց ներկայացվածությունը աշխարհի միապալատ խորհրդարաններում կազմում է միջինը 23,4%: ԵԱՀԿ երկրներում միջին ցուցանիշը 26,6% է: Կանանց խորհրդարանական մասնակցությունը արաբական աշխարհի երկրներում 18,9% է: Հայաստանում կանանց թիվը խորհրդարանում 18% է, Վրաստանում 16% է և Ադրբեջանում 16,8%:

Կին թեկնածուների հատկացվել է եթերի միայն 9%-ը



Խորհրդարանական ընտրություններին ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ դիտորդական առաքելության կողմից լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքներով՝ ամենադիտվող լրատվական հաղորդումների ընթացքում կին քաղաքական գործիչները ստացել են ընդամենը 9% քարոզչական լուսաբանում: Առաքելության նախնական եզրակացություններում նշված է նաև, որ կանայք ակտիվ էին որպես թեկնածուներ, սակայն կուսակցության հարթակներն անմիջականորեն չէին ներառում զեմդերային հավասարությանը վերաբերող հարցեր:

Կանայք ընտրական հանձնաժողովներում



ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի յոթ անդամներից երեքը կին են, ներառյալ նախագահի տեղակալը: Կանայք կազմում են ԸԸՀ-ի անդամների 35%-ը, սակայն նրանց միայն 16%-ն է զբաղեցնում ղեկավար պաշտոններ: Իսկ ՏԸՀ հանձնաժողովներում, միջազգային դիտորդների գնահատականներով, անդամների 57%-ը կանայք էին, ներառյալ 39%-ը՝ նախագահի պաշտոնում: Նշենք, որ օրենքով ԸԸՀ-ի անդամներից առնվազն երկուսը պետք է լինեն հակառակ սեռի ներկայացուցիչ, իսկ ՏԸՀ-ների համար զեմդերային պահանջներ չկան:

Կին թեկնածուները ըստ տարիքի և զբաղմունքի



Աժ ընտրություններին առաջադրված կին թեկնածուների 23%-ը մինչև 35 տարեկան երիտասարդ կանայք էին, 63%-ը՝ միջին տարիքի, 35-63 տարեկան, և 14%-ը՝ 63 տարեկանից բարձր էին: Կուսակցությունների ցուցակներում ներկայացված կին և տղամարդ թեկնածուների առնվազն մեկ երրորդը գործազուրկ էին: Աշխատող կանանց 45%-ը կրթության համակարգից էր:

# Նիշեր և քաղաքականություն

ՀՀ Աժ ընտրություններին ընդառաջ ներկայացված «Կանանց օրակարգը» շարունակում է ուժի մեջ մնալ

2017 մայիս [www.WomenNet.am](http://www.WomenNet.am)



## ՀՀ Ազգային ժողովի կազմում կանանց ներկայացվածությունը 18% է

Լուսանկարը՝ Լիլիան Գալստյանի

Վեցերորդ գումարման ՀՀ Ազգային ժողովի կազմում 105 պատգամավորներից 19-ը կամ 18%-ը կանայք են, այդ թվում՝ մեկ կին անցել է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ցուցակով, և երկուսն ընտրվել են տարածքային ցուցակներով:

Իշեցնենք, որ նախորդ գումարման Ազգային ժողովի կազմում կանայք 10%-ով էին ներկայացված, և այս ընտրություններում արձանագրված արդյունքը կարելի էր մեկ քայլ առաջ դիտարկել, եթե չլիներ ՀՀ ընտրական օրենսգրքում մեկ սեռի առնվազն 25-տոկոսանոց ներկայացվածություն ամրագրող քվոտայի հետ կապված ակնկալիքները, որոնք կրկին չարգանավորվեցին: Այս առումով Ճուլիս Գյումրու և Վանաձորի ընտրություններում քվոտան շատ ավելի արդյունավետ աշխատեց՝ ապահովելով ավագանիների կազմում 24% կին:

Հայաստանի հանրապետական կուսակցությունը 58 մանդատ է ստացել, որոնցից 8-ը կամ 14%-ը բաժին են ընկել կանանց: Օրենսդիր մարմնում աշխատելու են՝ ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը, Աժ պատգամավոր Մարգարիտ Եսայանը, Աժ փոխնախագահ Հերմինե Նաղդալյանը, երգչուհի, Աժ պատգամավոր Շուշան Պետրոսյանը, ՀՀ վարչապետի նախկին օգնական Շուշան Մարգարյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար Ջենմա Բաղդասարյանը, Աժ պատգամավորներ Ռուզաննա Մուրադյանը և Կարինե Աճեմյանը:

«Ծառուկյան» դաշինքը 31 մանդատ է ստացել, որոնցից 8-ը կամ 25,8%-ը կանանց է բաժին ընկել: Համապետական ցուցակով խորհրդարան են անցել Աժ պատգամավոր Նաիրա Ջոհրաբյանը, Գագիկ Ծառուկյանի խոսնակ, «Կենտրոն» հեռուստաընկերության «Էպիկենտրոն» լրատվական ծառայության տնօրեն Իվետա Տոնոյանը, Հայաստանի ազգային ազդարային համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնի ասիստենտ Լուիզա Սարգսյանը, Աժ պատգամավոր Կարինե Պողոսյանը, Երևանի պետական բժշկական համալսարանի պրոֆեսոր Մարինե Մարգարյանը, «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամի տնօրենի օգնական Շաբե Իսայանը: Տարածքային ցուցակով ընտրվել է ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանի օգնական Նորա Առուստամյանը, նաև համապետական ցուցակի երկրորդ մասից, որում ընդգրկված են Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների ցուցակով խորհրդարան են անցել ազգությամբ ռուս Տատյանա Միքայելյանը:

«Ելք» դաշինքը ներկայացված է 9 պատգամավորով, որոնցից 2-ը կամ 22%-ը կին են: Նրանք են՝ տարածքային ցուցակով Աժ անցած միակ կինը՝ Մանե Թանդիլյանը «Լուսավոր Հայաստան» կուսակցու-

թյունից և համապետական ցուցակով խորհրդարան անցած Լենա Նազարյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից:

Հայ հեղափոխական դաշնակցությունը Աժ-ում կունենա 7 պատգամավոր, նրանցից մեկն է կին (14%)՝ Վանաձորի պետական համալսարանի դասախոս, ֆիզմաթ գիտությունների թեկնածու Արմենուհի Կյուրեղյանը:

Այսպիսով, ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագրված մեկ սեռի առնվազն 25-տոկոսանոց ներկայացվածությունը Ազգային ժողով անցած քաղաքական ուժերից միայն մեկն է կարողացել ապահովել: Թեպետ խորհրդարանական ընտրությունների մասնակից կուսակցությունների ցուցակներում ընդգրկված թեկնածուների 30%-ը կանայք էին:

Ի տարբերություն նախորդ ընտրությունների, երբ կանանց թիվը նվազեց ինքնաբացարկների պատճառով, այս անգամ հիմնական պատճառը՝ տարածքային կան, այսպես կոչված, ռեյտինգային ցուցակներն էին, որտեղ կանայք ուղղակի դուրս մնացին փողատեր տղամարդկանց միջև ծավալված պայքարից: Ինչ վերաբերում է ինքնաբացարկներին, ապա այս անգամ դրանից տուժեցին հիմնականում տղամարդիկ: Մասնավորապես, ԿԸՀ-ում արձանագրված ընդհանուր թվով 35 ինքնաբացարկի դիմումից միայն երկուսն էին կանայք ներկայացրել:

## Նախընտրական ցուցակներ

### Թեկնածուների 30%-ը կանայք էին

Ընտրություններում առաջադրված 9 քաղաքական ուժերի 5 կուսակցությունների և 4 դաշինքների համապետական ցուցակներում, ընդհանուր թվով, 29,5% կին թեկնածու էր ներկայացված: Տարածքային ցուցակներով կին թեկնածուների թիվը 30,8% էր: Ստացվում է, որ 30/70 համամասնության հետևանքում ավելորդ զգուշավորություն էր, քանի որ կուսակցությունները պատրաստ էին ներգրավել իրենց ցուցակներում ավելի մեծ թվով կանանց, քան պահանջում է Ընտրական օրենսգրքի անցումային դրույթը: Դրա հետ մեկտեղ քաղաքական ուժերը դեռևս պատրաստ չէին զիջել կանանց ավելի մեծ թվով տեղեր առաջին հնգյակում և տասնյակում խիստ պահպանելով օրենքի տառն այս հարցում: Դրա փոխարեն, ինչպես ցույց տվեց ցուցակների վերլուծությունը, համալրել էին կին թեկնածուներով ցուցակների վերջին տասնյակները՝ առանձին դեպքերում կանանց ներկայացվածությունը հասցնելով 100%-ի: Ընտրությունների մասնակցող քաղաքական ուժերի ցուցակներից ոչ մեկը կին չէր գլխավորում: Կանայք չկային նաև երկրորդ հորիզոնականներում. քաղաքական ուժերից երեքը ընդգրկել էին կանանց 3-րդ հորիզոնականում, մնացածը՝ 4-րդ տեղից սկսած: Առաջին տասնյակում գրեթե բոլորը 2 կին էին ներկայացրել, և միայն մեկ կուսակցություն ընդգրկել էր առաջին տասնյակում 3 կին:





Exit Poll

Ո՞ր քաղաքական ուժին են նախապատվությունը տվել կին ընտրողները

Ապրիլի 2-ին կայացած Աժ ընտրությունների ընթացքում Հայկական սոցիոլոգիական ասոցիացիան ու Baltic Surveys /The Gallup Organization (Լիտվա) կազմակերպությունը, «Երկիր մեդիա» հեռուստատեսային շաբաթական...

Քվեարկությունը կատարած և ընտրատեղամասից դուրս եկած ընտրողներին խնդրել են լրացնել էլքի հարցման (Exit Poll) հարցաթերթիկը...



ացիայի նախագահ Գևորգ Պողոսյանի ներկայացմամբ՝ թեև հարցման արդյունքում սեռային առումով մեծ տարբերություններ չեն գրանցվել...

Հայաստանի հանրապետական կուսակցության օգտին ընտրություն կատարելիս կանանց ու տղամարդկանց մոտեցումները նույնն են եղել...

«Ծառուկյան» դաշինքին ծայր տվողների 25%-ը կանայք են, 23%-ը՝ տղամարդիկ:

«Ելք» դաշինքը նախընտրողների թվում կանայք ավելի շատ են. նրանց է ընտրել կանանց 10%-ը, տղամարդկանց 9%-ը:

Հայ հեղափոխական դաշնակցությանը իրենց քվեն է տվել տղամարդկանց 5%-ը, կանանց՝ 4%-ը:

«Հայկական Վերածնունդ» կուսակցության օգտին քվեարկել են կանանց ու տղամարդկանց 4%-ը:

«Օհանյան-Բախչի-Օսկանյան» դաշինքի դեպքում երկու սեռերի մոտեցումները նույնպես նույնն են եղել. դաշինքի օգտին է քվեարկել նրանց 3-ական տոկոսը:

«Կոնգրես-ՀԺԿ-ն» ավելի ընդունելի է եղել տղամարդկանց կողմից. նրանց օգտին է քվեարկել տղամարդկանց 3%-ը, կանանց՝ 2%-ը:

Հայաստանի կոմունիստական կուսակցությանը ավելի շատ ծայր են տվել տղամարդիկ՝ 3%-ը, իսկ կանանց 2%-ը:

«Ազատ դեմոկրատներին»-ն ընտրել են հարցմանը մասնակցած կանանց ու տղամարդկանց նույն 2-ական տոկոսը:

Այսպիսով, ստացվում է, որ կանայք ավելի շատ են ընտրել «Ծառուկյան» ու «Ելք» կուսակցությունների դաշինքներին, տղամարդիկ՝ ՀԺԿ-ին, «Կոնգրես-ՀԺԿ»-ին, ՀԿԿ-ին:

Որոշումների ընդունում

Ազգային ժողովի ղեկավար դաժնոններ զբաղեցնող կանանց թիվը նվազել է



Մայիսի 18-ին մեկնարկած 6-րդ գումարման Ազգային ժողովի առաջին նստաշրջանում ձևավորվել է Աժ ղեկավար կազմը՝ պատգամավորներն ընտրեցին խորհրդարանի նախագահին, երեք փոխնախագահներին...

Աժ նախագահությունում մեկ կին է ընտրվել

ՀՀ Ազգային ժողովի նախագահ ընտրվեց ՀՀԿ-ի առաջադրած թեկնածու Արա Բաբոյանը, իսկ նախագահի տեղակալներ ընտրվեցին Էդուարդ Շարնազանովը, Արփիմե Հովհաննիսյանը...

Մշտական հանձնաժողովների նախագահներից միայն մեկն է կին

Աժ մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնում կանանց ներկայացվածությունը նվազ է, որը ցուցում է այն պահանջներին, որոնք կանանց համար ավելի բարենպաստ են...

Ի դեպ, իրավապաշտպանների և նախորդ գումարման Աժ մարդու իրավունքների պաշտպանության առանձին հանձնաժողովի նախկին ղեկավար, մասնագիտությամբ իրավաբան էլիմար Վարդանյանը...

ի դեպ, իրավապաշտպանների և նախորդ գումարման Աժ մարդու իրավունքների պաշտպանության առանձին հանձնաժողովի նախկին ղեկավար, մասնագիտությամբ իրավաբան էլիմար Վարդանյանը...

Խմբակայության ղեկավարների թվում կանայք չկան

Նորընտիր Աժ-ի չորս խմբակայությունից որևէ մեկը կին չի գլխավորի, ի տարբերություն նախորդ գումարման, երբ վեց խմբակայությունից երեքը ղեկավարում էին կանայք՝ Յուրիան Բիշարյանը (ՕԵԿ), Նահիդե Բիշարյանը (ԲՀԿ), Ջարուհի Փոստանջյանը («Ժառանգություն»):

նախկին ղեկավար 131-ից դառնալով 105: Բացի այդ, փորձը ցույց է տվել, որ հանձնաժողովներում աշխատանքային ծանրաբեռնվածությունն անհավասար էր: Եվ վերջապես, բյուջեի մասին խնդիրները ել կլինեն. մի հանձնաժողովի ստեղծումը հինգ տարվա ընթացքում մոտավորապես 70-80 միլիոնի լրացուցիչ ծախս է պետք չլինում համար: Մի խոսքով, ինչպես միշտ, խնայողությունն արվեց «մարդու իրավունքների» հաշվին: Ի վերջո, ընդունվեց ՀՀԿ խմբակայության առաջադրած նախագիծը, ըստ որի, վեցերորդ գումարման Ազգային ժողովում կլինի 9 հանձնաժողով: Նրանցից միայն մեկը կին ղեկավար կունենա: Հանձնաժողովներից վեցի համար ՀՀԿ-ն է նախագահի թեկնածուների անունները իրապարակել: Նրանց թվում կին գործիչներ չկան: Առողջապահության և սոցիալական հարցերի հանձնաժողովում նախագահ է ընտրվել Հակոբ Հակոբյանը, արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը կղեկավարի Արմեն Աշոտյանը, պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը՝ Կորյուն Նահապետյանը, պետաիրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի հանձնաժողովը՝ Հրայր Թովմասյանը, տնտեսական հարցերի հանձնաժողովը՝ Խոսրով Հարությունյանը, ֆինանսաբյուջեի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում ընտրվել է Գագիկ Մինասյանը: «Ծառուկյան» դաշինքը երեք հանձնաժողովի նախագահի թեկնածուներ էր առաջադրել, նրանցից մեկը կին է՝ Նահիրա Զոհրաբյանը, ով կլինի եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ: «Ծառուկյան» դաշինքից Վարդան Բոստանջյանը կգլխավորի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի հանձնաժողովը, և Վարդան Գրիգորյանը՝ տարածքային կառավարման և գյուղատնտեսության հանձնաժողովը: Համայնապայմանում համար մեկը, որ նախորդ գումարման Աժ-ի 12 մշտական հանձնաժողովներից երկուսը կանայք էին գլխավորում՝ Նահիրա Զոհրաբյանը և Էլիմար Վարդանյանը:

Post factum

Ռեյտինգային ընտրակարգը փողոսեր տղամարդկանց դեմ ունի

Ինչպես հայտնի է, նորընտիր խորհրդարանի մանդատների ուղիղ կեսը բաժին է ընկնում տարածքային կամ, այսպես կոչված, ռեյտինգային ցուցակներով ամենամեծ թվով ծայրեր հավաքած պատգամավորներին, ընդ որում, դրանք բացառապես տղամարդիկ են: Ռեյտինգային ցուցակներով խորհրդարան է անցել միայն երկու կին՝ Սանն Թանդուխանը «Ելք» դաշինքից, ով առաջադրվելով թիվ 1 ընտրատարածքում՝ կարողացել է ապահովել 5110 ծայր իր դաշինքի համար, և «Ծառուկյան» դաշինքից Նորա Առուստամյանը, ով Արագածոտնի մարզի թիվ 7 ընտրատարածքում ստացավ 4789 ծայր ու խորհրդարան անցավ, քանի որ նրանից շատ ծայրեր ստացած տղամարդիկ ինքնաբազարկ հայտնեցին:

Տարածքային ցուցակներում ընդգրկված կանանց ևս մեկը՝ Լուսինե Մեջլումյանը ստացել էր 4722 ծայր, սակայն նրա դեպքում դա բավարար չէր խորհրդարան անցնելու համար: Նշենք, որ անկախ այն բանից, թե կանայք ընտրատարածքներում քանի ծայր են ապահովել իրենց կուսակցությունների համար, ռեյտինգային ցուցակներով խորհրդարան անցած զրեթե բոլոր թեկնածուները 5-10 հազարի կարգի և ավելի ծայրեր են ստացել: Ընդհանուր թվով, տարածքային ցուցակներով առաջադրված 353 կանանցից միայն 14-ն են 1000-2000 ծայր ստացել, մնացած կանայք հազարից քիչ ծայր են ստացել:

գին, ինչը ներկայացվում էր որպես առաջընթաց, ծիշտ հակառակ արդյունքի բերեց՝ գործակալական հանձնարարներով 100-տոկոսանոց մեծամասնական ընտրակարգի, որտեղ ամեն ինչ որոշվում է ռեյտինգային թեկնածուների ծայրերով, իսկ կուսակցությունները համարյա դեռ չեն խաղում:

Մի շարք քաղաքագետներ արդեն իսկ որակել են անցած խորհրդարանական ընտրությունները որպես փողի ու ավելի շատ փողի միջև գործարք ու առևտուր: Այդ առևտուրը քաղաքական ուժերն ու թեկնածուները զնորդներն էին, ընտրողները՝ ծայր վաճառողները: Տարածքային ցուցակներում ընդգրկված կանայք զնորդ չդարձան, փող չառաջարկեցին և ի հետևանք պարտվեցին: Նրանք առաջարկում էին քաղաքական գործընթացներին մոտ արակ հարողներու ծրագրեր, հոգսառատ քաղաքացու կողքին լինելու ցանկություն ու պատրաստակամություն: Սակայն այս արժեքները պահանջված չէին... Ցայտուն օրինակ է երևանի թիվ 3 ընտրատարածքում (Երևանի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջաններ) նույնիսկ

հազար քվե չստացած երևանի ավագանու անդամ Անահիտ Բախչյանի պարտությունը, ով վերջին մի քանի տարիներին եղել է իր խնդիրների մասին ակտիվ ջանքեր ցուցակագրած երևանցու կողքին, հետևում էր այդ խնդիրների լուծմանը: Նշենք, որ այդ ընտրատարածքում 42 հազար քվե էր ստացել գործարար Սամվել Ալեքսանյանը ՀՀԿ-ից, ով Parliament monitoring-ի տվյալներով՝ հինգ տարի «լռող» պատգամավորների շարքին է դասվում:

«Կովկաս» ինստիտուտի տնօրեն, քաղաքագետ Ալեքսանդր Իսկանդարյանի բնորոշմամբ՝ հասարակայնության առաջընդդեմ է «քվեարկում ենք ոչ թե սրտով, այլ ստամոքսով» սկզբունքով: Այսինքն՝ մարդիկ քվեարկում են ոչ թե գաղափարախոսության համար, այլ անձով պայմանավորված կամ պահի շահով: «Պահի շահ ասելով՝ նկատի ունեն փողի շեքի մուտքի դուռը, տան պատուհանը, գյուղում ճանապարհի ասֆալտապատել և այլն: Գրեթե բոլոր քաղաքական ուժերն այս ուղղությամբ աշխատել են», - ասում է Ալեքսանդր Իսկանդարյանը:



Փողի դերն այս ընտրություններում ակնհայտ մեծ է եղել: Հիմնական մրցակցությունը տեղերում շատ ժամանակ ծավալվել էր նույն քաղաքական ուժի փողատեր ներկայացուցիչների միջև, և կանայք, ովքեր մեծ թիվեր ստանում էին, ուղղակի դուրս են մնացել այդ պայքարից: Ընդ որում, ոչ միայն կանայք, նույնը վերաբերում է նաև բուժաստատություն չգլխավորող, գործարաններ ու սուպերմարքեթներ, մարդկանց ու թիվեր ստանալու եղբայր չունեցող, գործարար աներ կամ պաշտոնյա հայր չունեցող տղամարդ թեկնածուների:



Ուղերձ նորընտիր դասգամավորներին

«Կանանց օրակարգը» Եւրոմեմբերում է ուժի մեջ մնալ



«Հավասար» քարոզարշավը նախաձեռնող կազմակերպությունները շնորհավորում են նորընտիր պատգամավորներին՝ հաջողություններ մաղթելով նրանց օրինակի գործունեության մեջ և հիշեցնելով, որ խորհրդարանական ընտրություններին ընդառաջ ներկայացված «Կանանց օրակարգը» շարունակում է ուժի մեջ մնալ: Ակնկալվում է հատկապես կին պատգամավորների ակտիվությունը «Կանանց օրակարգը» առաջ տանելու հարցում:

Հիշեցնենք, որ «Կանանց օրակարգը» մշակվել էր «Հավասար» քարոզարշավի շրջանակներում, որն իրականացվում է «ՕքսեՆ» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի կողմից՝ WomenNet.am կայքի և «Ընտանիքի ակադեմիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: «Կանանց օրակարգը» ներկայացվել էր հանրությանը դեռ խորհրդարանական ընտրություններին ընդառաջ, քննարկվել էր ընտրություններին մասնակից քաղաքական ուժերի և կանանց ՀԿ-ների ներկայացուցիչների հետ: Սակայն այսօր էլ այն շարունակում է ուժի մեջ մնալ: Օրակարգի հիմնական նպատակն է նորընտիր Ազգային ժողովում ներկայացված պատգամավորների ուշադրությունը հրավիրել կանանց ու տղամարդկանց հավասարությունն ապահովող հիմնախնդիրների վրա, ակնկալելով, որ նրանք ոչ միայն կբարձրացնեն այդ հարցերը խորհրդարանի ամբիոնից, այլև լուծումներ կառայարկեն դրանց ուղղությամբ: Չէ՞ որ խորհրդարանական կառավարման պայմաններում ՀՀ Ազգային ժողովի մաս կազմող քաղաքական ուժերն են պատգամավորներին:

«Կանանց օրակարգի» տեքստը ներառում է մի շարք հարցադրումներ՝ կապված կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հետ, փաստեր ու թվեր տարբեր ոլորտներում առկա հիմնախնդիրների շուրջ, ինչպես նաև առաջարկում է դրանց հնարավոր լուծումները: Դրանով իսկ օրակարգը տեղեկատվության հարուստ աղբյուր է Հայաստանում առկա գեներային իրավիճակի վերաբերյալ յուրաքանչյուր պատգամավորի համար, ով մտահոգ է այդ հարցերով: «Կանանց օրակարգի» հարցադրումները հիմնված են ՀՀ Սահմանադրության, ՀՀ գեներային քաղաքականության հայեցակարգի շրջանակում ընդունված օրենքների և ծրագրերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների, ՀՀ վիճակագրական տվյալների, հանրապետությունում անցկացված վերջին հետազոտությունների և սոցիոլոգիական հարցումների վրա:

**Հիմնական հարցադրումները.**

1. Կողմնակի՞ց եք արդյոք ՄԱԿ-ի կողմից Կանանց զարգացման նպատակների շրջանակում առաջարկված 50/50 մասնակցային բանաձևին, որը ենթադրում է կանանց ու տղամարդկանց հավասար ներգրավում քաղաքականության, տնտեսության մեջ, սոցիալական կյանքում և հավասար ներկայացվածություն որոշումների ընդունման մակարդակում:
2. Ի՞նչ քայլեր եք պատրաստ ձեռնարկելու «Կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի իրագործման ուղղությամբ:
3. Պատրաստ եք արդյոք ընդունելու «Ընտանեկան բռնության կանխարգելման մասին» ՀՀ օրենքը և հետևողականություն ցուցաբերելու դրա իրագործման հարցում:
4. Ի՞նչ քայլեր եք ձեռնարկելու ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածով ամրագրված կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանման ուղղությամբ:
5. Նախատեսո՞ւմ եք արդյոք կյանքի կոչել ՀՀ գեներային քաղաքականության հայեցակարգի շրջանակում հեջակված սկզբունքները և հաշվի առնել սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում կանանց ու տղամարդկանց շահերն ու կարիքները:
6. Համաձայն եք արդյոք, որ անհրաժեշտ է ուժեղացնել ՀՀ վարչապետին կից Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով խորհրդի կարողությունները՝ գեներային հավասարության ազգային մեխանիզմի գործառնությունները, այդ թվում՝ համապատասխան քաղաքականության համակարգում ու մոնիթորինգը, արդյունավետ իրականացնելու համար:
7. Ձեր վերաբերմունքը հետևյալ հիմնախնդիրների և դրանց լուծման եղանակներին.

- Կանանց ոչ բավարար ներկայացվածությունը իշխանության բոլոր ճյուղերում և մակարդակներում
- Կանանց ներուժի ոչ արդյունավետ օգտագործումը և աշխատանքի շուկայում կանանց նկատմամբ խտրականության առկայությունը
- Կանանց և երեխաների, կին գլխավորով տնային տնտեսությունների առաջնությունը աղքատության տեսանկյունից
- Գյուղաբնակ կանանց առավել խոցելիությունը ռեսուրսների և ծառայությունների հասանելիության տեսանկյունից
- Հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ խտրականության բացառում և լիարժեք սոցիալական ներառման ապահովում
- Կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնման անհրաժեշտությունը ժողովրդագրական ճգնաժամի խորացման, ծնելիության անկման, միգրացիայի պայմաններում
- Գեներային կարծրատիպերի վերարտադրումը կրթության և ՁԼՄ-ների միջոցով
- Առողջապահական ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովումը, մայրական և մանկական մահացության ցուցանիշների նվազեցումը:

Օրակարգը բաց է միանալու համար:

Տեսակետ



«Չեմ կարծում, որ մենք պետք է անընդհատ քվտաներն ավելացնենք, պետք է միջավայրը փոխենք ու խթանենք ստեղծենք, որպեսզի բնական առաջընթաց ապահովվեն: Քվտաներն անընդհատ ավելացնելով մենք հանգում ենք նրան, որ կանայք պասիվանում են՝ սպասելով, որ իրենց որպես «պոզիտիվ խտրականության» օբյեկտ կընդգրկեն նախընտրական ցուցակներում: Իսկ եթե դու ուզում ես տղամարդու կողմից թեզ ընձեռնվող «աջակցող հատուկ միջոցներից» մշտապես օգտվել, ապա այստեղ դժվար է խոսել հավասարությունից, որովհետև դու շնորհի են սպասում տղամարդու կողմից: Ինչ-որ մի փուլում քվտաները պետք է գործեն, սակայն այդ փուլը պետք է անցնի, այլ ոչ թե լճանա, ու կանայք մշտապես կապեն իրենց առաջընթացը միայն դրանց հետ: Կարծում եմ՝ կնոջ դերը կլինի պետք է բարձրացնի: Տղամարդիկ արհեստականորեն կարող են կնոջը ինչ-որ դերակատարում տալ, եթե դա պահանջվում է, օրինակ՝ քվտայի համար: Բայց կինը հավասարը հավասարի հետ մրցակցելու հնարավորություն կունենա այն ժամանակ, երբ ինքն իր վրա աշխատի այնպես, որ ունակ լինի տղամարդկանց հետ հավասար մեկնակետում հանդես գալ: Ասեմ ավելին. կանայք պետք է շատ ավելի առաջ լինեն, որպեսզի կարողանան դա անել, քանի որ պատրիարխալ հասարակություններում տղամարդկանց և կանանց մեկնակետերը երբեք հավասար չեն լինում: Իմ մեկնակետը ևս հավասար չի եղել, և դա նույնպես հասարակության վերաբերմունքով է պայմանավորված: Կնոջը միշտ բերահավատորեն են վերաբերվում, միշտ նախ իր սեռի տեսակետից են դիտարկում, հետո մոր լսում, թե ինչ է նա ասում...»

Արփինե Հովհաննիսյան, ՀՀ ԱԺ փոխնախագահ, Հայաստանի հանրապետական կուսակցություն

Տարածքային կամ բաց ցուցակները կարող են նպաստավոր լինել հայտնի թեկնածու տղամարդկանց համար, դրանով իսկ ստեղծվում է վտանգ, որ բաց ցուցակների ներդրումը կարող է հանգեցնել ավելի քիչ թվով կանանց ընտրության: Սակայն, ինչպես ցույց է տալիս փորձը, բաց ցուցակները կարող են և չխոչընդոտել կանանց: Դա կախված է նրանից, թե որքանով են կանայք տվյալ հասարակությունում պատրաստ ինքնակազմակերպվելու և կին թեկնածուներին ակտիվորեն աջակցելու:

Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հանակարգերի՝ քաղաքականության մեջ կանանց մասնակցության վերաբերյալ» զեկուլցից (2009)

Փորձագետի կարծիք

Նախընտրական ծրագրերի գեներային վերլուծություն

«Խորհրդարանական ընտրություններին մասնակից քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերը, ընդհանուր առմամբ, գեներային կույր սկզբունքով էին կազմված: Դրանցում նախատեսվող գործողություններն ու դրանց արդյունքները ըստ սեռի քիթախավորված չէին: Հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման նպատակ չի դրվում, այդ կոնցեպտը ծրագրերում ընդհանրապես բացակայում էր»,- մշում է գեներային հարցերով փորձագետ Լիլիթ Ջաքարյանը:

Մեր խոսքով՝ նախաձեռնելով նախընտրական ծրագրերի գեներային վերլուծությունը՝ ակնկալում էին գտնել նրանց մեջ «Կանանց օրակարգում» ներառված հիմնախնդիրների լուծումները կամ վերաբերմունքը կանանց ու տղամարդկանց հավասարության խնդիրն: Սակայն այդ ակնկալիքները չարդարացան: «Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի ծրագրերում կանանց հիմնախնդիրներին անմիջական անդրադարձն առկա էր միայն երկու-երեք դրույթներում: Այսպես, «Հայկական վերածնունդ» կուսակցության նախընտրական ծրագրի կետերից մեկում նշված էր, որ «Սեփականության իրավունքով հողատարածք ունեցող կանանց աշխատանքը որպես աշխատանքային ստաժի համարում՝ կենսաթոշակի ամենամյա ինքնափոխումը ու բարձրացմամբ»: «Ազատ դեմոկրատների» ծրագրում կար դրույթ, որով նախատեսվում է «30-50%-ով ավելացնել մայրերի վճարովի արժակուրդի տևողությունը, նման հնարավորություն ընձեռնելով նաև հայրերի համար», ինչպես նաև մեկ այլ դրույթ, որով առաջարկվում է «վճարովի հիմունքներով բանակում ծառայելու հնարավորություն տալ նաև կանանց ու աղջիկներին ու այդ նպատակով հատուկ զնդեր ստեղծել»: Հայաստանի կոնոմիստական կուսակցության նախընտրական ծրագրով նախատեսվում էր «Մայրական կապիտալի մասին» օրենքի ընդունում: Մնացած քաղաքական ուժերի ծրագրերում գեներային զգալի դրույթներ չկային, կարելի էր միայն ենթադրել, որ որոշ ծրագրային դրույթների իրագործումը կարող է նպաստել կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը կամ անուղղակի ազդեցություն ունենալ նրանց իրավիճակի բարելավման առումով»,- մշում է փորձագետը:

Օրինակ՝ գրեթե բոլոր ծրագրերում կային դրույթներ, որոնք կարող են նպաստավոր դաշտ ստեղծել փոքր և միջին բիզնեսի զարգացման և, հետևապես, կանանց ձեռներեցության համար: Շատ ծրագրերում նախատեսվում էր հատկապես տնտեսական և առողջապահության ոլորտի աշխատավորների բարձրացում կամ մանկավարժների շաբաթական ծանրաբեռնվածության (դրույթ) 18-ժամյա չափանիշի ներդրում, ինչը կարելի է դիտարկել որպես կանանց հիմնախնդիրների լուծման համար նպաստավոր դրույթներ, հաշվի առնելով այն փաստը, որ այդ ոլորտների աշխատակիցների բացարձակ մեծամասնությունը կանայք են: Ուշադրության էր արժանի «Ելք» դաշինքի ծրագրի հետևյալ դրույթը. «Ծննդատներում կենդանի ծնված ծնունդից հետո, կանայք ունենում են մեծ ծնունդից հետո կանայք առողջական խնդիրներ ունեցող երեխաների

տեղափոխումը հատուկ հաստատություններ»:  
Կան ՀՀԿ կուսակցության նախընտրական ծրագրում մարդու իրավունքների վերաբերող բոլոր դրույթները ընդգրկված են եղել «Մարդը և պետությունը» բաժնում, որում գեներալված են արդարության, ազնիվ մրցակցության, բոլորի համար հնարավորությունների ապահովման սկզբունքները: «Կարելի է ենթադրել, որ դրանք վերաբերում են նաև կանանց, սակայն միջազգային ու պատմական փորձը ցույց է տալիս, որ գեներային չեզոք շարադրումները, որպես կանոն, բերում են գեներային կույր քաղաքականության»,- մշում է Լիլիթ Ջաքարյանը: Նրա խոսքով՝ իրականում կուսակցությունների նախընտրական ծրագրերը երբեք էլ աչքի չեն ընկել գեներային զգայունությանը, կանանց օրակարգը դրանցում գրեթե միշտ սահմանափակվել է ընտանիքին և մայրությանը վերաբերող դրույթներով: «Սակայն 2017-ի ծրագրերում կուսակցություններն այլևս չեն անդրադարձել նույնիսկ այն միեմիմումին, որն առկա էր նախորդ ընտրությունների օրակարգում: Բացակայում է նույնիսկ մայրության պաշտպանության խնդիրների ավանդական անդրադարձը, բայց դա այն պատճառով չէ, որ մայրերը մեզանում այլևս բավարար չափով են պաշտպանված, կամ էլ կուսակցություններն առաջադիմել են ու մտահոգվել կանանց քաղաքական կամ տնտեսական մասնակցության, ընտանիքն ու կարիերան համատեղելու հնարավորությունների ընդլայնման խնդիրներով: Ուղղակի, ցավոք, բայց պետք է խոստովանենք, որ գեներային հավասարությանը և բազմաթիվ այլ հիմնախնդիրներին, որոնք կապված են երկրի զարգացման գործընթացներում կանանց մասնակցության հետ, քաղաքական ուժերը մեզանում լուրջ չեն վերաբերվում: Եվ հենց այդ պատճառով է, որ այդ հարցերը տեղ չեն գտնում կուսակցությունների ծրագրերում»,- եզրափակում է մասնագետը:



«Խորհրդարանական ընտրություններին մասնակից քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերը, ընդհանուր առմամբ, գեներային կույր սկզբունքով էին կազմված: Դրանցում նախատեսվող գործողություններն ու դրանց արդյունքները ըստ սեռի քիթախավորված չէին: Հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման նպատակ չի դրվում, այդ կոնցեպտը ծրագրերում ընդհանրապես բացակայում էր»,- մշում է գեներային հարցերով փորձագետ Լիլիթ Ջաքարյանը:



Հարց դասգամավորին

Պատրաստ եմ արդյո՞ք դաստիարակելու կանանց շահերը խորհրդարանում

Օրենսդիր գործունեության անցած 105 պատգամավորների թվում 19-ը կանայք են, նրանցից 11-ն առաջին անգամ են մուտք գործում խորհրդարան: Մենք զրուցել ենք նորընտիր կին պատգամավորներից մի քանիսի հետ՝ առաջարկելով պատասխանել ընդամենը մեկ հարցի՝ պատրաստ եմ նրանք արդյո՞ք պաշտպանելու կանանց իրավունքներն ու շահերը խորհրդարանում, անկախ իրենց քաղաքական դիրքորոշումներից...

Շուշան Սարգսյան  
ՀՀԿ խմբակցություն



- Միանշանակ և առանց խոսքի պատրաստ եմ պաշտպանելու կանանց շահերը: Այս պահին չեմ կարող կոնկրետացնել այդ գործունեության ուղղությունները, բայց կարծում եմ, որ ավելի հանգամանալից ուսումնասիրության դեպքում կկարողանամ առանձնացնել առաջնահերթությունները: Եվ, այո՞, պատրաստ եմ քվեարկելու ոչ միայն որպես պատգամավոր, այլև հատկապես որպես կին պատգամավոր:

Իվետա Տոնոյան  
«Ծառուկյան» դաշինք  
խմբակցություն



- Անշուշտ, կանանց խնդիրները ինձ համար լինելու են առաջնային, քանզի ես ինքս կին եմ ու շատ լավ հասկանում եմ, թե ինչ հասարակությունում ենք ապրում, ու ինչ խնդիրների են կանայք առնչվում: Բազմիցս եմ ասել, որ կանանց ներուժը շատ ավելի է, քան այսօր ներկայացված է այս կանայք ուղիղում ու նույն օրենսդիրում, և միշտ կողմնակից եմ եղել, որ քաղաքականապես գրագետ, լայն աշխարհայացքով, բաժնիկան կանայք ավելի շատ ներկայացված լինեն տարբեր ոլորտներում: Վստահ եմ, որ կանանց ներգրավվածության մեծացումը միայն դրական

ազդեցություն կունենա ցանկացած ոլորտի, այդ թվում՝ քաղաքականության վրա:

Լենա Նազարյան  
«Ելք» դաշինք  
խմբակցություն



- Ես ընդհանուր մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում եմ դիտարկում կանանց իրավունքները, բայց նաև հասկանում եմ, որ մեր իրականության մեջ կանայք սի մշակութային դրսևորումներ, որոնք բերում են կանանց նկատմամբ խտրականության, և այդ պայմաններում ստիպված ենք կանանց իրավունքների մասին առանձին խոսել: Եվ չեմ բացառում, որ կլինեն քվեարկություններ, երբ ես կքվեարկեմ առաջնային որպես կին և իմ խոսքում կասեմ, որ տվյալ օրենքին կողմ եմ կին պատգամավոր լինելով, քանի որ ուզում եմ հատկապես առանձնացնել կանանց իրավունքները և պաշտպանել այն հնարավորությունները, որոնցից նրանք նույնպես պետք է օգտվեն:

Մանե Թանդիյան  
«Ելք» դաշինք  
խմբակցություն



- Մինչև պատգամավոր դառնալը պաշտպանել եմ կանանց իրավունքները նույնքան ակտիվ, որքան և տղամարդկանցը, քանի որ

նույն համատեքստում եմ դիտարկում հավասար հնարավորությունները: Բնական է, որ շարունակելու եմ իմ այդ գործունեությունը նաև որպես Ազգային ժողովի պատգամավոր, որովհետև շատ կարևոր եմ համարում կանանց մասնակցությունը, ներգրավվածությունը, հավասար հնարավորությունները յուրաքանչյուր ոլորտում՝ օրենսդիրում, գործադիրում: Եվ ես կարծում եմ, որ մենք չունենք այնքան ռեսուրս, որպեսզի մեզ շրջափակում է թույլ տանք մեկուսացնել կանանց ինչ-որ ոլորտներից: Կանանց ներուժը ակնհայտ է, նրանց ներդրումը կարող է մեր պետությունին ի վերջո զարգացած երկիր դարձնել և լրիվ այլ իմիջ հաղորդել՝ դարձնելով այն համարձակ, վճռական, հետևողական, հեռատես պետություն:

Արմենուհի Կյուրեղյան  
ՀՀԿ խմբակցություն



- Միանշանակ պաշտպանելու եմ կանանց շահերը Ազգային ժողովում և արդեն իսկ կարող եմ ասել, որ առաջին քայլն արել եմ՝ մատնանշելով Աժ պետաիրավական և մարդու իրավունքների մշտական հանձնաժողովի նորընտիր նախագահ Հրայր Թովմասյանին ուղղված հարցում «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը՝ ավելի գործունե մեխանիզմներ ու երաշխիքներ ներդրելու նպատակով: Այնպես որ, ոչ միայն պատրաստ եմ իմ պատգամավորական գործունեության ընթացքում բարձրաձայնել ու պաշտպանել կանանց շահերը, այլև կփորձեմ բոլորին էլ համախմբել այդ խնդիրների շուրջ, որպեսզի կարողանամ այդ հարցերն առաջ մղել...

Չայն բազմաց



ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կողմից 2016-ին անցկացված «Տղամարդիկ և գենդերային հավասարությունը Հայաստանում» սոցիոլոգիական հետազոտության արդյունքներով՝ հարցվածների 63,3%-ը միանշանակ աջակցում է քվտաներին, համարում դրանք ճիշտ, ընդ որում, թե կառավարության, թե տեղական ինքնակառավարման մակարդակով: Քվտաներին դեմ հանդես եկավ ընդամենը 32%-ը, մնացածները կան չզգիտեին, կան դժվարացել էին պատասխանել: Քվտաներին կողմ հանդես եկող հարցվածների շրջանում կանանց տոկոսը ավելի բարձր է՝ 67%, քան տղամարդկանց՝ 59%:

Ի դեպ, հարցվածների 67%-ն աջակցում է քվտաների ներդրմանը ոչ միայն քաղաքական մակարդակում, այլ նաև բիզնեսում: Կին հարցվածների շրջանում՝ 70%, տղամարդկանց շրջանում՝ 61,5%:

«Շատ էության, հասարակությունը գիտակցում է խնդիրը, և մեծ մասը հակված է ճանաչելու որոշումների ընդունման մակարդակում կանանց ներկայացվածության խնդիրը, հասկանում են, որ կանանց ներուժը չի օգտագործվում», - նշում է փորձագետ Վլադիմիր Օսիպովը:

Ընտրությունների բոլոր մասնակիցները պահպանել էին ամբողջ թվով քառասուններում յուրաքանչյուր սեռի ներկայացուցչի վերաբերյալ պահանջը, և ընդհանուր թվով 1558 թեկնածուների 30%-ը կանայք էին: Որպես դրական զարգացում և ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի նախկինում արված հանձնարարականներին համահունչ, գենդերային քվտան գործում է և՛ գրանցման, և՛ բաշխման, և՛ թափուր մանդատների լրացման դեպքում: - նշված է Ընտրությունների միջազգային դիտարկման առաքելության նախնական եզրակացություններում:

(Ապրիլի 2, 2017թ.):


Ինչդե՞ս աշխատեց փոսան

Քվտայի արդյունավետության մասին մեկնաբանություններ են ներկայացնում Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ Ջեննա Հարթայանը և սոցիոլոգ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Վլադիմիր Օսիպովը:

**Ջեննա Հարթայան.**  
«Պետք է հստակ գիտակցենք, որ քվտաները ժամանակավոր միջոց են»  
- Գտնում եմ, որ ՀԿ սեկտորի կողմից քվտայի վերաբերյալ առաջարկությունները ճիշտ էին, և իրականում դրական փոփոխություն տեղի ունեցավ, քանի որ կանանց ներկայացվածությունն աճեց 10%-ից մինչև 18%: Նշեմ միայն, որ երբ մենք առաջ էինք տանում քվտաների բարձրացման մասին առաջարկը, այն ժամանակ դեռ հայտնի չէր, որ Ընտրական օրենսգրքում կնեղորվի տարածքային կամ բաց ցուցակների գաղափարը, որն անբարենպաստ է բավարար ֆինանսական ռեսուրսներ և ճանաչելիություն չունեցող կին թեկնածուների համար: Այնուամենայնիվ, ամբողջով քվտայի շնորհիվ տեսնում ենք դրական տեղաշարժ Ազգային ժողովում կանանց ներկայացվածության առումով: Բայց ինձ հիմա ավելի շատ անհանգստացնում է ոչ թե այն, թե քանի կին ավելացավ Աժ-ում, այլ ինչպիսի որակներով կանայք ավելացան, իսկ դա ցույց կտա նրանց

հետագա աշխատանքը: Հիմնական պահանջը միշտ էլ եղել է այն, որ խորհրդարան պետք է գնա կանայք, ովքեր գիտակ են, խելացի, տիրապետում են իրավիճակներին, կարողանում են բարձրացնել հարցեր, որոնք ոչ միայն կանանց, այլև ընդհանրապես հասարակությանն են հուզում: Բացի այս, պետք է գիտակցենք, որ քվտաները ժամանակավոր միջոց են, մինչև որ քաղաքացիական հասարակության ինստիտուտները, այդ թվում՝ ՀԿ-ներն ու կուսակցությունները, պատրաստեն այն կարգերը, որոնք պետք է խորհրդարան գնան: Ժամանակ կգա, երբ քվտաներ չեն լինի, բայց կլինեն մեծ թվով ակտիվ կանայք, ովքեր ինքնուրույն կկարողանան մտնել քաղաքական գործընթացների մեջ: Ի վերջո, մինչև ե՞րբ հասարակական սեկտորը պետք է խնամակալ լինի կանանց, որպեսզի նրանք հայտնվեն օրենսդիր մարմնում: Սա է կարևոր խնդիրը, որի շուրջ պետք է մտածել: Իսկ այս փուլում կանայք, ովքեր անցել են խորհրդարան քվտաների շնորհիվ, պետք է գիտակցեն, որ պարտավորություն ունեն հասարակության առաջ:

**Վլադիմիր Օսիպով.**  
«Պիմամիկան դրական է, սակայն աճի տեմպերն ու մասշտաբները չի կարելի բավարար կոչել»  
- Կարծում եմ՝ քվտաներն անշուշտ աշխատեցին: Ազգային ժողովի ներկայիս կազմը նախորդի հետ համարելով անհնար է չտեսնել, որ դիմամիկան միանշանակ դրական է: Սակայն ցանկալի է մտածել այն մասին, թե որքանով է այն համարելի եվրոպայում և ամբողջ աշխարհում գոյություն ունեցող միտումների հետ: Կարծում եմ՝ այս հարցադրմանը միայն բացասական կարելի է պատասխանել, քանի որ եվրոպայի երկրներում, օրինակ՝ խորհրդարանում կանանց միջին ներկայացվածությունը 26-27% է: Բացի այդ, ՀՀ ընտրական օրենսգրքը արձանագրել է 25% քվտա կանանց համար, սակայն ներդրված տարածքային ցուցակների պատճառով զգալիորեն նվազեցվել է կանանց ներկայացվածությունը Աժ-ում: Ամփոփելի է, որ կանայք այս կարգի «մրցումներում» պարտվում են: Սա հավասար պայմաններով մրցակցություն չէ, և ընդհանրապես, կարծում եմ, որ տարածքային ցուցակները անց-



յալի մնացորդ են, սակայն ելնելով կոնկրետ քաղաքական շահերից և օրվա պահանջներից, դրանք կիրառվեցին: Մի խոսքով, Աժ նախորդ կազմի համեմատությամբ խզումը, իհարկե, կրճատվել է, սակայն ոչ այնքան, որ խորհրդարանում կանանց ներկայացվածությունը բավարար համարվի, և ոչ միայն Հայաստանի, այլև իրեն ժողովրդավարական համա-

րող կան ժողովրդավարական բարեփոխումների ուղին բռնած ցանկացած երկրի համար: Առավել ևս, որ աշխարհում առաջ է շարժվում, և 2015-ին ՄԱԿ-ի ընդունած Կայուն զարգացման նպատակների շրջանակներում սահմանված է զարգացման գործընթացներում կանանց ու տղամարդկանց հավասար մասնակցության նոր նշանո՞ղ՝ 50/50:



Այս համարը պատրաստվել է Օքսֆամ և «ՕքսեՋեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի աջակցությամբ «ՀԱՎԱՍԱԻ» քարոզարշավի շրջանակներում:  
Վլադիմիր խմբագիր՝ Թամարա Գովաթյանյան  
Էլ. հասցե՝ womennetam@gmail.com

Համարի վրա աշխատել են՝  
Լիա Խոջոյանը, Արման Ղարիբյանը,  
Լալա Տեր-Ղազարյանը,  
Մերի Հարությունյանը,  
Տաթև Սարգսյանը, Գայանե Սարգսյանը